ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Ուրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . . $\frac{1}{2}$ „

Ժողովուրդ, դու ինքդ մնայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեւան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի՛ աղեսիս, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻՉԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 8. ԴԵԿՏԵՄԲԵՐ. Nr 8. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

Վերջնագիր !!
Եւրոպական վեց Մեծ
Պետութիւնների
առ
Սուլթան Ապտիւլ
Համիտ II.

Շնորհաւոր
Նոր Տարի !!!!

Մաղթում ենք քեզ Բարօրութիւն,
կարողութիւն, նոր կեանք և
ԼՕրութիւն և տոկունութիւն
եթէ դրամի պէտք ու
ամենայն վստահութեա
ղող ես դիմել մեզ



ՍՏԱԽՕՍԸ

Մինաս Չերազ, որ հայկական խնդրի մէջ տաճկական եավաշ-եավաշ՝ի մեթոդն ունի և չէ վռազ, կը հառաչէ որ „Նազարբէկի դաշոյնը կտրեց գլուխը“ Արփիարեանի կեղծ Հնչակի, որը դարձաւ անգլուխ կամ գլուխը կտրած: Հիմա գալիս ենք հաղորդելու Հայութեան, որ այդ դաշոյնը չը շատացաւ միայն այդ դժբաղդ եղեռնագործութեամբ: Նա կտրեց նաև Չերազի գլուխը... որ նոյնչափ կեղծ էր, որչափ և առաջինը: „Ապտակից“, դաշոյնի հարուածի տակ, թռաւ դէն ու գլորվեցաւ ստայօդութեան անդունդը Չերազի „նախկին պատգամաւոր Բերլինի վեհաժողովում“ տիտղոսը: „Ապտակից“ ուշքի եկած՝ Չերազը վերջապէս խոստովանեցաւ, որ ինքը երբէք պատգամաւոր եղած չէ և թէ այդ պատճառով իր գլխի հետ իր թերթի գլուխից հանում է այլ ևս այդ տիտղոսը:

Այսպէս, Չերազը եօթ-ութ տարի, աւելի ճիշդ տասնեօթ և տասնութ տարի շարունակ ամենախայտառակ կերպով խաբում էր ամբողջ Հայութեան ու Եւրօպացիներին, որ ինքը նախկին պատգամաւոր էր. այսօր նա ինքը խոստովանում է, որ դա սուտ էր: Վախեցած „Ապտակի“ և „Հնչակի“ գրածներից Չերազի այդ ստախօսութեան մասին, նա ինքն իր պատռված դիմակն այլ ևս ստիպված վայր է ձգում և խոստովանում, որ ինքը եղել է միշտ ստախօս ու խաբեբայ: Բայց հարց. եթէ ամբողջ տասնեակ տարիներով Չերազն ամենքին շարունակ խաբել ու ստել է թէ ինքը պատգամաւոր էր և չէ ամաչել այդ ամօթալի ընթացքից, այլ ևս նրա որ մի խօսքին կարելի է հաւատալ, քանի որ նա յայտարարվեցաւ իբրև ստախօս par ecxelence...

***

Սուտ պատգամաւորը կամ ստախօս Չերազը իր սիրամարգի փետուրներից զրկվեցաւ... Ի՞նչ տգեղ են նրա ոտները... Ասում եմ „ոտները“, որովհեաև գլուխ չունի այլ ևս, իր գլուխը միչև այժմ „պատգամաւոր“ անունը եղած լինելով: Բայց Չերազը կարող է ինքն իրան մխիթարել. նա ասում է որ Արփիարեանի հրատարակած թերթը „եթէ գլուխ չունի՝ խելք ունի“: Ինքն էլ, Չերազը, յուսով ենք, որ նոյնպէս զրկված լինելով, մեր դաշոյնի շնորհով, իր գլխից, նոյնպէս կը խելքանայ, իր չափը կը ճանաչէ... Սակայն խոստանում ենք նրա սուտ ու կեղծ պատգամաւորական տիտղոսն անմահացնել պատմութեան մէջ, որի էջերում կը գրվէ այսպէս. — „Մինաս Չերազ, նշանաւոր սուտ պատգամաւոր Բերլինի վեհաժողովում, նշանաւոր ստախօս, որ ամբողջ աշխարհին խաբում և կըլլեցնում էր թէ ինքը պատգամաւոր էր. նշանաւոր կեղծ գլուխ, որ կտրվեցաւ „Հնչակի“ և „Ապտակի“ դաշոյնից և գլորվեցաւ սըտախօսների վիհը: Նա աւելի նշանաւոր դարձաւ ևս նրանով, որ նրա ոչ մի խօսքին այլ ևս հաւատ ընծայել չէր կարելի սկսած այն օրից, երբ իր գլուխն ընկած ժամանակ խոստովանեց, որ ինքն ամբողջ աշխարհին ստել է:

***

Սուտ ու ստախօս պատգամաւորը հարուստ հայերի շէմքերին ծունր իջնելով է ներս մըտնում այցելութեան: Նա մեծութեան տենդով է բռնված: Այդ դժբաղդ մեղալօմանն ուզում էր ամենքին հաւատացնել, որ ինքը մեծ մարդ է և պահված մի քանի հարուստ կամ անունի հայերի թևի տակ՝ շահագործում է նրանց դիրքն, ինչպէս մինչև այժմ, ամբողջ տասնեակ տարիների ընթացքում, շահագործում էր „պատգամաւոր Բերլինի Վեհաժողովում“ սուտ ու կեղծ տիտղոսը: Ամեն տեղ էլ ստախօսութիւնը նա իրան փէշակ է շինել. և հէնց նոյն այս սիւնակներում, անցեալ անգամ, Պ. Տօնապետեանի տված հարուածից շշմված, նա իր թաքածն է լզում և ձգնում է հերքել իր այն ասածը թէ Արփիարեանը, ՕՀ-ը տաճկական գործակալներ են: Չերազն իր ճանապարհը լաւ է գտել, ի հարկէ. քանի որ իր էութիւնը մերկացվեցաւ և ինքը երեւան եկաւ իբրև պատմական ստախօս, այսուհետև իր նմանները էլ պէտք է գտնէ իրան ընկեր... Եւ նշանաւոր ստախօսը՝ Արփիարեանի և սրա արբանեակների նկատմամբ „պաշտպանեմ — չը պաշտպանեմ“ դիրք ընդունելով, իր գերեզմանն ինքն է փորում, իրան շըպրտելով Արփիարականների գիրկը: Բարի աջողութիւն. մի մարդ, որ ամբողջ աշխարհին խաբել է շարունակ, թէ ինքը „պատգամաւոր էր Բերլինի վեհաժողովին“, և միևնոյն ժամանակ հարուստ ու յայտնի հայերի անունն է շահագործում, արդէն ուրիշ անելիք չունի, եթէ ոչ հետևել Դարվինի „Բնական ընտրողութեան“ օրէնքին և ընկնել նոր Արշակաւանի մէջ:

***

Եթէ ես լինէի Կ. Պոլսի իրաբագովական դպրոցից, որի վարպետներից մէկը Չերազն է, սուտ պատգամաւորի այդ ամօթալի անկման առիթով կը գրէի այսպէս. — „Աւա՜ղ (Չերազին վա՛խ), եղո՛ւկ (մտքով յեղյեղուկ), բաբէ՜ (որ ամենքին խաբէ), ափսոս (որ ինքն իրան փորէ փոս), սահեցաւ (որ երբէք չերևեցաւ) վառ աստղ մը հայկական հօրիզօնի յատակէն (Ապտակէն), գլորեցաւ յանդունդս յաւէրժական մութերի (սուտերի): Նա միշտ մեծ էր հայկական (սեփական) շահերու ու գործերու հետախուզութեանց մէջ (խորասուզութեանց մէջ) և Իտալիոյ ճանապարհորդութեան և Բերլինի վեհաժողովի մասին իր գրած յիշատանութիւնք (ստաբանութիւնք) անմահ արձաններ (վարձկաններ) կը մնան հայոց գրականութեան արտին (դարդին) մէջ և ապագայ սերունդներ կուղղեն անոր յիշատակին՝ փառաբան (ստաբան), անմահ (քա՛հ-քա՛հ) ածականը (ստացականը):“

***

Պ. Սուտ պատգամաւոր, մէկ աղդարարութիւն եմ անում ձեզ, որ գիտեմ, ձեզ պէս մեծ մարդկանց սովորութեան համեմատ կը հաղորդէք ուր որ հարկն է, այսինքն՝ նրանց ուրոնց շահն այդ կը շոշափէ, այսինքն Արշակաւանի պետ Արփիար, ձեր աշակերտ Աղասիին, որին ձեզ արժանի էք գտնում, և դրանց ընկերներին: Յայտարարելիք հետևեալն է: Նպաստարբէկի դաշոյնը, ձեր շնորհով, պ. Չերազ, պատրաստվում է շուտով կտրելու մէկ ուրիշ գլուխ, որ ձեր ակնարկած Շիրվանեանի „կորստեան“ հեղինակն է: Եւ աւելին չեմ ասում պ. Չերազ: Թէև ձեր գլուխը նոյն դաշոյնից կտրվեցաւ, բայց ձեր ասելով՝ խելքը գլխում չէ լինում այլ... չը գիտեմ ուր — կամ ոտքերում, կամ գրպանում... և ուրեմն դուք այն չէք կորցրել ձեր գլուխը կորցրած ժամանակ, և իմ այս փոքրիկ աղդարարութիւնից հարկ եղածը կը հասկանաք...

ՄԱՀՈՒԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ
Պ. Մ. ՉԵՐԱԶԻ ԴԷՄ

ԱԼԳԱՐԻ- ՖՐԱՆՔ-ՇԻԼԻՆ-ՏՕԼԱՐ-ՂՈՒՐՈՒՇ ՔՕՖԷ-ԲԱԿԱՆ խմբակը անցեալ դեկ. 20-ին արտակարգ մի գումարման հրաւիրած էր իւր ամենափայլուն անդամները:

Յողովին կը նախագահէր Արփիարեան էֆէնտի խոր-սուգի զգեստներով, հայեացքը մռայլ ու մտամոլոր և, Վիկտոր-Հիւգոյի նման... ցուցամատը ճակատին յենած:

Նախագահ էֆէնտիի աջակողմը, ի նշան բացառիկ պատուոյ, բազմած էր նշանաւոր հայ-թուրք Ք... էֆէնտի կարմիր ֆէս մը ուղղը անցուցած...

„Էֆէնտիներ, ըսաւ նախագահը թեթև մը հաղալէն յետոյ տկար ու բեկբեկուն ձայնով, ես ուղղակի, առանց այլևայլութեան կ'առաջարկեմ մահուան սպառնալիք արձակել Մինաս Չերազ անուանուող արարածին դէմ: Ահա 4—5 տարիէ ի վեր է որ նա իր թերթին մէջ և բերանացի կանպատէ զիս, զիս որ ձեր էութեան սիրտն ու արիւնն եմ, հոգին ու կրակն եմ, խանդն ու խինդն եմ, հունդն ու խենթն եմ, (ներողութիւն, սղագրութիւնս այստեղ մի քիչ շփոթեցաւ, ճառախօսի նոյնահնչիւն խօսքեր գործածելուն պատճառաւ): Մենք կլլեցինք իր բոլոր անարգանքները, իր անլուր թշնամանքները: Այլ ևս չափը անցաւ: Կամ վերջին դաս մը տալու է անոր, կամ վերջին մահացու հարուածը: Ձեզ յայտնի է թէ մեր միակ մխիթարանքը և նեցուկը այժմ մեր սիրեցեալ Ք... էֆէնտին է: Նա է որ ձեռքի տակէն նամակներ կը գրէ աջ ու ձախ՝ գովաբանելով Մամիկոնեան եպիսկոպոսը, Հասան թահսին փաշան և զիս: Նա է որ ամեն միջոցներով կ'աշխատէր ու կ'աշխատէ սրբացնելու զմեզ մեր խայտառակ դիրքին մէջ որոյ շնորհիւ շարունակ անդունդէ անդունդ որոտընդոստ թնդնդալով կը գլտորինք և անդ՝ խորխորատին խորունկ խորերը՝ մեր խորախորհուրդ խորհրդոց նպատակը կը պատի ու կը պայթի (սոյն պարբերութեան ճշտութեանը սղագրութիւնս կ'երաշխաւորեմ): Ք... էֆէտին մեզ անձուէր է, նա է որ այնքան սրտաշարժ ու հռետորական դամբանական արտասանեց մեր վաղամեռիկ Անգլուխի դագաղին վրայ, մինչ զի ինքը փրզձկեցաւ և ձեր ամենուդ աչքերն ալ արտասուքով լիցուց: Ցեղեակ էք նոյնպէս թէ անոր յանձնարարագրերու շնորհիւն է որ փարիզի և Մարսէյլի թրքական հիւպատոսները կը ճանաչեն և վստահութիւն կ'առնեն Ցաճկաստան մտնելու անցագիր տալ մեր կողմակից անդամներուն... ուրեմն, կը տեսնէք որ նա մեր ունեցած տիտղոսի մասին նախանձելի մրցակից մը կը հանդիսանայ մեզի... Արդ նոյն այս մեր արժանաւոր ընկերակիցն է դարձեալ որ ոչ նուազ մեծ ծառայութիւն կուզէ մատուցանել մեզ՝ խոստանալով Չերազին ո և է ձևի տակ հրապարակապէս յետս կոչել տալ այն ամենն ինչ որ l'Arménie-ի մէջ հրատարակած են ինձ դէմ իբր լրտեսի և մատնիչի:

„Մեր աս Ք... քաղաքագէտ, քանքարաւոր այլ քողապատ (ճշմարտութիւնը՝ սղագրութեամբս կ'երաշխաւորեմ) գործակիցը շատ յոյս չունիմ որ յաջողի իւր պերճաբան ոճով և տաճկական մարդահաճութեամբը. ասոր համար խորհեցայ որ ՕՀ-ՕՀն ալ միասին երթայ և դաս մ'ալ ինք կարդայ: Ու իրեն կը յանձնեմ կեսարիոյ պաստրմայի ռուճուխ մը հանգոյն ռեվոլվերի: Ու մեր քաջարի ՕՀ-ՕՀն ալ երբ մեր այս „նորագիւտ զէնքը“ ուղղէ l'Arménie ի խմբագրի կուրծքին, հաւատի եմ թէ յայնժամ Չերազ վռազ պիտի իջանի և մեր ամեն պահանջին զիջանի:

„Ահա իմ խորին խորհուրդս ղոր կը ներկայացնեմ խորհրդոյդ՝ Չերին խորիմաստութեան և խնդակցութեան վրայ կանխապէս վստահելով, զի խորին են խրատները խորհրդիս:“

Յողովը այս խ՛խ՛խ ձայներուն սկսաւ արձագանք տալ ու խոխռալ. յետոյ ուժգին ծափ-ծափ ծափահարեց, ու խաւարերեսը ինդում երեսի փոխուեցաւ. ապա Ք... էֆէնտին տաճկական պաշտօնեայի նրբագնացութեամբ և ՕՀ—ՕՀ՝ը կեղծ ասպետական քայլերով ճամբայ ելան կատարելու իրենց դժուարին առաքելութիւնը:

***

Վ... էֆէնտի պ. Չերազի առջև ներկայանալով տաճկական խորին և գետնահակ „թէմէնա“ ընելէն յետոյ հետևեալ գրաւոր ձաւը արտասանեց երկչոտ շեշտով մը.

„Մէսիւ Չերազ, որքան որ ամբողջ կեանքս ու գործունէութիւնս անցուցած եմ թերքաց մէջ շոյելով ու շողոքորթելով անոնց յոռի կողմերը, սակայն ինչ կրնայի ընել. անոնց կեանքի մէջ մտնող հայը կամայ ակամայ կեղծաւոր, շողոքորթ, իւր ազգը պարսաւող, իւր ազգային նուիրական գաղափարները ծաղրող և դատապարտող կը ձևանայ: Բնական է որ ես

այլապէս չէի կրնար մնալ Թրքական լրագրութեան մէջ ուր յաճախ գարշելի յօդուածներ գրելու ստիպեալ էի Հայութեան դէմ: Բայց վերջէն մեղքերս քաւեցի՝ մտնելով Պատրիարքարան, որը ուրիշ անունով „պաթգախանէ“ կը կոչուի: Մենք հէմշէրիներ ենք, միւսիւ Շերազ. մենք Պոլսեցի ենք, Ազնուաշուք Տիար. ինչո՞ւ մեր վրայ խնդացնել տանք այն ատելի ռուսահայերն ու կոպիտ գաւառացիները: Մենք Պոլսեցիքս Արփիար մ'ունինք միայն, որ Աստղի մը պէս „Եըլտըզի“ լուսովը կը փայլի հայ յեղափոխութեան հորիզոնի վրայ և դուք կ'արատաւորէք մեր այդ միակ Աստղը: Ի սէր Բոսֆորի կապոյտ ալիքներուն, միւսիւ Շերազ, յանուն մեր իրարագովական սուրբ սկզբունքին վսեմաշուք Տիար, կը պաղատիմ գովեցէք Արփիար էֆէնտին, բարձրացուցէք զինքը l'Arménie-ի մէջ:

—Սակայն ինչ կըսէք, ք...էֆէնտի, ինչպէս կրնամ գովել երբ ամէն տեղ խօսած եմ թէ Արփիարեանը գող մ'է եղեր, թէ Կ. Պոլսոյ ամէն մարդիկ կը պնդեն թէ նա լրտես ու մատնիչ է եղեր, թէ նա շարունակ իւր ընկերակիցներովն շատ գիշերներ Նազըմ փաշայի տունը կերթար, ճաշեր ու քէֆեր կընէ եղեր և այլն, և այլն. և այս ինձ ըսողներն ու դրողները շատ հաւատի ու վստահելի պատուաւոր մարդիկ են: Եւ այդ ամէնն ես իբր ինձ համար մարսած համոզումներ խօսած ու հրատարակած եմ, ուստի կը ցաւիմ ըսել թէ չը պիտի կարողանամ հերքել...“

„—Պէտք է հերքես ապա թէ ոչ այս ռէվոլվերովս ուղեղդ կը պայթեցնեմ, հենց հիմա, մռնչելով գոչեց Օհ.-Օհը:“

Խեղճ Մինաս Շերազ, սոսկումէն գողհար աչքերը կը մթագնին և առանց ռէվոլվերը իւր վրայ ուղղեալ պաստրմայի սուճուխէն զանազանելու, կը զիջանի և գրաւոր երաշխաւորութիւն ու պատոյ խոստում կուտայ ուրանալ իւր համոզումը հերքելով Արփիարեանի և Օհ.—Օհի Թրքական լրտեսներ լինելն:

***

Ալֆարի-Ֆրանքական խմբակի առաքեալները այսպէս մսէ սուճուխի սպառնալիքի տակ պ. Մինաս Շերազէն գրաւոր երաշխաւորութիւն առնելէն յետոյ չորս ոտքով կը փութան մեծագոյն յաղթանակի աւետիքը տանելու ժողովին որ անհամբեր կը սպասէր իրենց: Իսկ Մինաս Շերազ մնալով միայնակ իր սենեակի մէջ, սկսաւ երթևեկել. ու հեռաւոր նշանաւոր մենախօսութիւնը արտասանեց,

*
* *

„Այո՛, ինչու չէ, շատ լաւ կարող եմ հերքել, կը գրեմ որ Իզմիրլեանի օրով պատրիարքարանի մէջ „կարևոր դիրք“ գրաւող մի հէմշէրիի հետ ունեցած տեսակցութենէս այժմալ մի ուրիշ համոզումն գոյացուցած եմ թէ Արփիարեան և Օհ. Օհ բնաւ լրտեսներ չէին, միանգամայն այնպիսի խառնափնդոր բաներ կը գրեմ միասին որ ընթերցողը հասկնայ թէ ես այդ խմբակի համակիր չեմ: Սակայն խորհելու է թէ ինչպէ՞ս հերքեմ. որովհետև նոյն իսկ Լօնդոնի մէջ կան բազմաթիւ մարդիկ որոց խօսած եմ Արփիարի և ընկերներու մատնիչներ լինելու համոզումս: Ինչպէ՞ս ուրանամ, ինչպէ՞ս հերքեմ... Իրաւ որ երբեմն ծիծաղելի պատուախնդրութեան անտեղի խղճահարութիւններ կունենամ... Այդ մարդիկ թող երթան իրենք իրենց մտքի մէջ խորհին որ Մինաս Շերազ ստախօս է, սակայն հօ՞ չեն երթար թերթերու մէջ հրատարակել, որպէս զի ատով վնասեն այն վարկիս զոր պէտք և կենսական կը համարեմ ունենալ կարգ մը պարզամիտ ու բարեմիտ հարուստներու մօտ:

Այո՛, դժուար է այս խաղի մէջէն ելնելը: Թէև կը հասկանամ որ բռնածս ընթացքս անազնիւ ընթացք մ'է հրապարակագրի մը համար, սակայն ինչո՞ւ չընեմ, ինչո՞ւ խեղաթիւրեալ ոճերով չօգտուիմ առիթէն և անազնիւ զէնքերը ազնուութեան շպարով չը գործածեմ հընչակեան կուսակցութեան դէմ: Ահա ուրեմն տարի է որ թերթիս ճակտին կը հրատարակէի:

„Մինաս Շերազ ՆԱԽԿԻՆ-ՊԱՏԳԱՄԱՒՈՐ-ԲԵՌԼԻՆԻ-ՎԵՀԱԾՈՂՈՎ ԻՆ“, սակայն այդ նոյն „հընչակը“ և իւր վերջին սոսկալի „Ապտակը“ սթափեցրին ինձ և զգացնել արին ինձ այն պոչաւոր, խայտառակ սուտը զոր ահա տասն տարիէ ի վեր կը կրկնէի ու կը հրատարակէի խորին գոհունակութեամբ: Ապաքէն ես ինքս ալ սկսած էի հաւատալ իմ ստեղծած սուտին: Իսկ հիմա իսկապէս ամօթ կզգամ և կը զարմանամ թէ ինչ յանդգնութիւն էր իմ կողմէս այդպիսի կեղծ պաշտօն մը վերագրել ինձ: Քանի որ խայտառակութեան հոտը ելլել սկսած է, l'Arménie-ի ճակատէն վերցնելու է այդ պատուական տիտղոսն ...: Մնա՞ս բարով ով իմ տիտղոս սիրասուն. Մնաս բարով ո՞վ իմ „Մինաս Շերազ իբր նախկին պատգամաւոր Բեռլինի վեհաժողովին:“ Մնաս բարով առ յաւետ...: Ահա տիտղոս մը որ դիմաթաւալ կ'իյնայ „Նազարբէկ-ի անագորոյն դաշոյնի տակ“: Բաբէ Արփիարի կեղծ-հընչակի գլուխն ալ գլխատուեցաւ նոյն դաշոյնի տակ: Արփիարի թերթը մնաց „անգլուխ“, ես ալ մընացի „անտիտղոս“: Ուրեմն բաղդակից եմ Արփիարին հետ ինչու և դաշնակից չդառնամ տնոր մեր միահաղոյն թշնամին ջախջախելու: Այո՛, սիրասուն տիտղոս իւր գերեզմանի խորէն վրէժ կը պոռայ...: Առ քեզ, առ քեզ ով իմդ Արփիար. գիրկս կը բանամ քեզի. դու ալ քո գիրկդ բաց ինձ, զի երկուքս ալ մոխիթարութեան պէտք ունինք: Կը միանամ քեզ հետ քու անպատիւ զէնքերովն պատերազմ մղելու այն ոխերիմ „հընչակի“ դէմ, որի ղողանջիւնէն քո թերթդ գլխատուեցաւ անգլիական դատարանի կառափնտի վրայ և որի Ապտակի հարուածներէն իմ պաշտելի տիտղոսը ամօթէն գետինը մտաւ ողջ ողջ... Օ՜ն, վրե՜ժ. Արփիա՛ր վրէ՜ժ՜ժ՜ժ... եկուր միանանք ու վրէժնիսլուծենք... վրէ՜ժ... վրէ՜ժ՜ժ՜ժ...ժ...ժ...ժ:

***

Այս ջղագրգիռ մենախօսութեան վրայ պ. Մինաս Շերազ ուշաթափ վար ընկաւ իւր սենեակին մէջ: Բժիշկները թէպէտ նախ յուսահատ, սակայն վերջէն մեծ դժուարութեամբ յաջողեցան ուշքի բերել. թէև վտանգը անցած է, այնու ամենայնիւ բժիշկները ջերմապէս յանձնարարած են դադարեցնել առ ժամապէս ամէն գրական աշխատութիւն և մի ամիս հանգիստ մնալ առանց ոչ և է այցելութիւն ընդունելու:

Բայց հաշտութեան պայմանագրութենէն ի վեր երախտապարտ Արփիարեանը եթէ Լօնդոն կը գտնուի...՞ անձամբ իւր այցեւորմը կը տանի պ. Շերազի բնակարանի սպասաւորին կը յանձնէ, իսկ եթէ բացակայ...՞ է փոստայով կը ղրկէ, ասէն օր:

ԽԱՐԱԶԱՆ.

ԽԱՐԴԱԽԸ.

Վարժապետ. — Ի՞նչպէս կրնայ յորջորջուիլ այն անձը, որ բնաւ Բեռլինի վեհաժողովի պատգամաւոր եղած չըլլալով հանդերձ, երկար տարիներ և շարունակաբար Եւրոպայի մէջ ինքը իր համար հրատարակել ու ինքնամկրտել է հետևեալ տիտղոսով „նախկին պատգամաւոր Բեռլինի վեհաժողովին“:

Աշակերտ. — Այդպիսի մարդը կրնայ յորջորջուիլ ու պէտք է յորջորջուի խարդախ մակդիրով:

Վարժապետ. — Ուրիշ ինչ համարժէք և ճշգրիտ մակդիրով կրնաս մկրտել ատանկ անձը:

Աշակերտ. — Խաբեբա՛յ:

Վարժապետ. — Ուրի՞շ...

Աշակերտ. — Ստախօս.

Վարժապետ. — Կրնա՞ս ինձի ապացուցանել թէ ատանկ մարդը խարդախ մ'է:

Աշակերտ. — Այո՛, քանի որ իսկական ճշմարտութիւնը և անհիրքելի իրականութիւնը խարդախել է. արդէն մեր Բարոյախօսութեան դասատուն անցեալ օր մեզի պատմեց թէ ճշմարտութիւնն ու իրականութիւնն կեղծող մարդը բարոյական ըմբռնումով „խարդախ“ անունը կը կրէ:

Վարժապետ. — Հիմա, տեսնեմ կրնաս ինձ ըսել՝ թէ ինչո՞ւ նաև խաբեբայ մակդիրին արժանի է ատանկ մարդը:

Աշակերտ. — Վարժապետ, այդ հարցումը այսօրուայ դասիս մէջ չկայ, կեցիր մի քիչ մտածեմ... Հա՛ գտայ, և ահա. որովհետև իր այդ ըրածը թէորիայի մէջ ափաշկարայ խաբէբայութիւն մ'է: Իսկ խաբէբայութիւնը լսածիս նայելով մի՛միայն խաբեբաներու արհեստն է, իմացեր եմ թէ անպատիւ մարդիկ միայն կրնան խաբեբայ լինել:

Վարժապետ. — Կեցցէս, արդ հիմա հաստատէ թէ ինչո՞ւ միանգամայն և ստախօս կ'անուանես.

Աշակերտ. — Որովհետև ինքն իրան վերագրած այդ պաշտօնը ոչ մի ժամանակ չ'է ունեցել. հետևաբար չունեցած տիտղոսի մը իրան սեփականացնելը, հրատարակելն ու յաստարարելը ըստինքեան ստախօսութիւն մ'է, և այն ալ պոչաւոր ստախօսութիւն:

ԿՏՐՈՒՄԸ.

„Ա՛ռ ծամերէս այս ծաղիկը,
Գոհար վզկապս ա՛ռ վըզէս.
Թող մէկն ըլլայ երկայն ճամբիդ աստղիկը,
Քեզ ուղեցոյց ուր կուզես.
Միւսը քեզի՝ շղթան իմ քաղցը սիրոյս,
Մինչեւ որ դու հասնես բաղդիդ, աչքիս լոյս:“

*

Նայեց եարին, խոր ա՜խ քաշեց,
Խոր ա՜խ քաշեց... ու գընաց:
Եւ այդ ժամը սիրտը մաշեց
Խղճուկ եարին, որ մընաց:

Լուսընկայ էր այն գիշերը:
Գլգըլալէն վըտակը
Սարէն վազէր ղէպ խորշերը,
Ուր քընանար ծորակը:

Ասես այծեամ՝ լեռնէ ի լեռ
Կերթար անվախ կըտրիճը.
Եարի ծաղիկն՝ իր քաջալեր
Կուլին մէջ մինչ մահիճը:

Քաջի արիւն իր մէջ կեռար,
Արծուէ նայեացքը թռչէր,
Թռչէր հեռուն, ուր կը զոռար
Պատերազմըն իր կոչեր:

Գոհար վզկապն պիտ շղթայէր
Վանդակին մէջ անոր սիրտ,
Մինչեւ վատին նա քայքայէր,
Մինչեւ կոտրէր շղթան քիրտ:

Կուի դաշտէն դառնայ յաղթող՝
Արժան եարի կարօտին,
Որ պիտ բերէ ծեռքով դողդող
Սիրոյ պըսակն ու զօտին:

Զինաը մէջքէն բերէ զօտին,
Հանէ վզկապն կըտրճի,
Պըսակ կապէ քաջի ճակտին,
Առնէն օրհնէնքը խաչի...

Ասես այծեամ՝ լեռնէ ի լեռ
Քաջ զինուորը սըլանայ.
Եարի ծաղիկն՝ իր քաջալեր,
Անմահ կուլին մօտենայ:

Եւ նա հասաւ... Սուր ու գնդակ,
Թունդ ու բոմբիւն, կոտորած,
Արիւն, արիւն... շուրջ դժնդակ
Պատերազմը գոռոռաց:

Եւ նա կուէր ասես առիւծ՝
Գոհար վզկապն իր կուշտին,
Ծաղիկ-աստղիկն՝ իր ուղեցոյց,
Ինչպէս վերջին հրաժեշտին:

Կուեց, ընկաւ... խոր ա՜խ քաշեց...
Ներկըուեցան արիւնով
Ծաղիկ, վզկապն՝ որ սիրտ մաշեց.
Մեռա՜ւ՝ եարի անունով:

Լռեց կռիւը... Երկինք փոուած.
Լուսընկայ է գիշերը...
Ա՜խ, ծաղիկը խոր է խրուած
Քաջի վէրքին խորշերը:

Զար թշնամու շղթան ընկաւ,
Բայց խեղճ եարի սէր-շղթան՝
Քաջի կուրծքը խրուեց, մընաւ,
Սրտին փաթթեց յաւիտեան:

Եւ այն սիրած դիի վերան
Լոկ կոլորուէր գիժ քամին
Եւ կը սուրար վայրին լեռան՝
Երկչոտ ոտքը այծեամին...

*

„Ա՛ռ ծամերէս այս ծաղիկը,
Գոհար վզկապս ա՛ռ վըզէս.
Թող մէկն ըլլայ երկայն ճամբիդ աստղիկը,
Քեզ ուղեցոյց ուր կուզես.
Միւսը քեզի՝ շղթան իմ քաղցը սիրոյս,
Մինչեւ որ դու հասնես բաղդիդ, աչքիս լոյս:“

ԹԵՆԹԸ.

Քաղաք. Երթեալ աղխարհին ով պիտի մատուցանէ այս մեծ ծառայութիւնը.

MENU.

Մեծապատիւ Պարոն Մինաս Զերազ, նախկին պատգամաւոր Բերլինի վեհաժողովին, ներսէս պատրիարքի և այլ մեծ անուններու թեւի տակ պահվտվող և նրանց անունով խօսող փոքրիկ մարդը և այլն, և այլն (զի անթիւ են տիտղոսք նորա, ինչպէս մեղքք նորա) մի մեծ ճաշկերոյթ է տվել 50-100 հրաւիրուածների, որոնց թւում պատիւ ունէր լինելու նաև „Ապտակի" գեղագէմ լրաբերը։ Ճաշկերոյթի ցուցակը, Menu-ն, հետևեալն է, որ կատարելապէս պատկերացնում է անեղծ... կեղծ „դիւանագէտի" տիեզերահռչակ ազգասիրութիւնը և հանճարեղ բանջարակերական ճաշակը և այլն (զի անթիւ են նորա զայլ յատկութիւնք ևս)։ Այսպէս հռչակաւոր Menu-ն հետևեալն է, որով Զերազը պիտի ջանք անի ուրիշների բերանները բաղցրացնել իր նկատմամբ.—

Ապուր Տիգրիսի — Ապուր սուտ պատգամաւոր։

Ապուր Եփրատի — Ապուր կեղծ դիւանագէտ։

Արաքսի ձուկ — Ձուկ պղտոր ջուրի մէջ որսալու։

Կարնոյ եղ — քծնող խլեզ։

Վանայ գառն — Գառնագգեստ գայլ։

Սասնոյ կաղամբ — Ջէզուիտի տաղանդ։

Մշոյ փաթաթէս — Մշոյ աղուէս։

Արարատեան պուդինգ՝ — խարդախութեան շփոթ։

Իւղ — Հիւրերի գլուխը եղելու համար։

Dessert, զանազան — Խաբեբայութիւն համեմած կեղծ պարկեշտութեան հետ և ստութիւն՝ վախկոտութեան հետ։

Օձիթունի գինը — Ձէյթունի արիւն։

Ճաշից յետոյ հիւրերի մէջ վիճաբանութիւն ծագեցաւ։ Ոմանք ասում էին, թէ հիմա Հայաստանում սով է և Զերազի արածը անշուշտ, աչքակապութիւն է։ Միւսները պնդում էին, որ Զերազի համար անկարելի բան չկայ. նա կարող է Եփրատի ու Տիգրիսի ջուրը հիւրերին երևակայական կերպով խմցնել, ապուրի տեղ, ապուր տալով՝ ձուկ որսալ, Քրիստոսի պէս հրաշք գործել՝ և Ձէյթունի արիւնը գինի դարձնել, գործածել... այդ բոլորն իրական է և Հայաստանի սովը Զերազի հրաշագործութեան արգելք չէ կարող լինել։ Վիճաբանութիւնը երկար տևեց. սակայն երկու կողմն էլ համաձայն էին այն կէտում, որ այդ Menu-ն ճաշակելով, ամենքը ճաշակած եղան իրան՝ Զերազին... Վերջինիս դէմքն այդ լսելիս՝ պայծառացաւ մի լայն ժպիտով...

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

— Մեր ընթերցողներին կը յանցնարարենք կարդալ Թիֆլիսի յայտնի „Արձագանք" լրագրի թիւ 151 թերթի խմբագրական յօդուածը. որ սաստիկ կերպիւ կը հարուածէ ու կը նախատէ Արփիարեան ու իր խմբակը՝ իբր թուրք կառավարութեան լրտեսներ ու դաւադիրներ։

* * *

— Ոստիկանութեան նախկին նախարար Նազըմ փաշա իր ժառանգութիւնը բաժնած պահուն Արփիարեանի „կեղծ-Հնչակեան" խմբակը կտակեր է իւր յաջորդին՝ արդի նախարար Շէֆֆիք բէյին։ Այս առթիւ Daily News և Լօնդօնի ուրիշ մեծ թերթերը հրատարակեցին Կ. Պոլսէն ստացած հետևեալ հեռագիրը. „Կեղծ Հնչակեան (ճիշտ այս բառը գործածուած է հեռագրերում) սկսած են սպառնալիքով դրամ շորթել հարուստ հայերէն և իրենց այդ կողոպուտը կը բաժնեն ոստիկանութեան նորընտիր նախարար Շէֆֆիք բէյի հետ"։

„ԱՊՏԱԿ"-Ի Հանելուկներ

Ռէբուս թիւ 9





Թիւ 8 Ռէբուսի լուծումը

Հարու - ածում է - ն - մերկ - աղ - ափ - արը բ - այծ - նոյ - նիս - կդ - որայ - նով - աւելի - ի ևս - դար - ա - ձու - մէն - նոյ - ր

Հարուածումէն մեր գաղափարը բայց նոյն իսկ դորանով աւելի ևս տարածում են նորան։—